ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« »——————— 2015թ. N_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի նիստի N 01/29.7/{335493}-15 արձանագրության 36-րդ կետի 1-ին ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 01/22.13./5147-15 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Վ. Սարգսյան 1 և 3 հասցեում գտնվող տարածքին հարող ընդհանուր 384.77 քմ (302.77+82.0) մակերեսով հողամասերը՝ համաձայն հավելվածի, նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի սահմանները ենթակա են ճշգրտման հատակագիծ թողարկելու ժամանակ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի նիստի N 01/29.7/{335493}-15 արձանագրության 36-րդ կետի 1-ին ենթակետով ընդունվել է «Գույքի փոխանակման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Վ. Սարգսյան 3 հասցեում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության նախկին շենքի տեղում իրականացված կառուցապատման աշխատանքների արդյունքում կառուցապատվել է նաև ք. Երևան, Վ. Սարգսյան 1 հասցեում գտնվող Կարուսել Իսթաբլիշմենտ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի մի մասը՝ 291.81 քմ չափով: Ուստի, առաջացել է անհրաժեշտություն նույն տարածքում Կարուսել Իսթաբլիշմենտ ընկերությանը տրամադրել հողամաս՝ ՀՀ-ի կողմից կառուցապատված հողամասի դիմաց:

Որպես հարցի լուծում ՀՀ կառավարության վերը նշված որոշման խմբագրված նախագծով առաջարկվել է Երևանի քաղաքապետին՝ Երևանի Վ. Սարգսյան 1 և 3 հասցեում գտնվող տարածքին հարող Երևանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող 384.77 քմ (302.77+82.0) հողամասերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ հետագայում ք. Երևան, Վ. Սարգսյան 1 հասցեում գտնվող Կարուսել Իսթաբլիշմենտ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ՀՀ-ի կողմից կառուցապատված 291.81 քմ հողամասի հետ փոխանակելու համար:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի նիստի N 01/29.7/{335493}-15 արձանագրության 36-րդ կետի 1-ին ենթակետով ընդունված որոշումը և այն հանգամանքը, որ հողամասերի հատակագծման, անհրաժեշտության դեպքում՝ հողամասերի գործառնական նշանակության փոփոխման և սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ աշխատանքների կատարումը հնարավոր է իրականացնել Երևանի ավագանու համապատասխան որոշման առկայության դեպքում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 01/22.13./5147-15 գրությամբ խնդրել է Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողամասեր նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հողամասեր նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի
..... « »-ի N ..... - Ա որոշման

Ս Խ Ե Մ Ա